**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԹԻՎ ԿՎ/08/2022 ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «26» մայիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Ն. Համբարձումյանի, Ա. Փաշինյանի և Մ. Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ՀՀ վարչական դատարանի դատավոր Ռաֆիկ Գագիկի Խանդանյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում ոչ ամբողջական ներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մայիսի 19-ի N ՎԻՎ/20/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի հիմքով հարուցված 2022 թվականի մայիսի 19-ի N ԿՎ/08/2022 կարգապահական վարույթի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Տ

**1. Գործի նախապատմությունը.**

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել ՀՀ վարչական դատարանի դատավոր Ռաֆիկ Գագիկի Խանդանյանի կողմից 2021 թվականի մայիսի 27-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր)



249

«Տվյալ տարվա ընթացքում եղել է մասնակցություն առևտրային կազմակերպություններում» և «Տվյալ տարվա ընթացքում եղել է հավատարմագրային կառավարման հանձնված բաժնեմաս» բաժիններում իր և իր կնոջ՝ Նատելլա Բեգլարյանի մասնակցությունը առևտրային կազմակերպությունում և (կամ) Ռաֆիկ Խանդանյանին պատկանող բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տեղեկությունները չներկայացնելը: Նշված առերևույթ խախտման առնչությամբ 2021 թվականի մայիսի 19-ին Հանձնաժողովի որոշմամբ հարուցել է թիվ N ՎԻՎ/20/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2022 թվականի մայիսի 19-ին Ռաֆիկ Խանդանյանը հրավիրվել է Հանձնաժողով և վերջինիս ներկայացուցիչ փաստաբան Դավիթ Վարդանյանի մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ N ՎԻՎ/20/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի մայիսի 26-ին, որն իրականացվել է Ռաֆիկ Խանդանյանի ներկայացուցիչ փաստաբան Դավիթ Վարդանյանի մասնակցությամբ: Վերջինս Հանձնաժողովին է ներկայացրել գրավոր դիրքորոշում և նյութեր գործում քննարկվող փաստական հանգամանքների կապակցությամբ:

## 2. <u>Վարույթի մասնակցի բացատրությունը</u>.

Ռաֆիկ Խանդանյանի ներկայացուցիչ փաստաբան Դավիթ Վարդանյանը գործի քննության ընթացքում ներկայացված գրավոր դիրքորոշմամբ, մասնավորապես, հայտնել է, որ արդեն իսկ ներկայացված հայտարարագրերում նշված է եղել, որ Ռաֆիկ Խանդանյանը և իր կինը տիրապետում են առևտրային կազմակերպություններում բաժնեմասերը 100 տոկոս չափով: Նշված հանգամանքն ինքնին նշանակում է, որ վերջիններս ունեն մասնակցություն առևտրային կազմակերպություններում՝ որպես ընդհանուր ժողովի մասնակիցներ: Չի կարող անձը ձեռք բերի բաժնեմաս, սակայն



250

դրանով իսկ չդառնա ընկերության մասնակից: Այլ բնույթի մասնակցություն վերջիններս չունեն նշված առևտրային կազմակերպություններում:

Նշել է նաև, որ հայտարարագիր ներկայացնողը «Տվյալ տարվա ընթացքում եղել է մասնակցություն առևտրային կազմակերպություններում» մեկնաբանել է այնպես, որ նշված բաժնում պետք է լրացվեն միայն այն մասնակցության վերաբերյալ տեղեկությունները, որոնց վերաբերյալ գործարքները կնքվել էին տվյալ տարվա՝ 2020 թվականի ընթացքում: Նույնը վերաբերում է նաև «ԱՐԱՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու մասին տեղեկատվությանը, որը տեղի է ունեցել դեռևս 2017 թվականին, այլ ոչ թե 2020 թվականին, այդ պատճառով էլ կիկին չի լրացվել համապատասխան բաժինը:

Նշված դիրքորոշումը գործի քննության ընթացքում պնդել է Դավիթ Վարդանյանը: Վերջինս ներկայացրել է նաև Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը 2021 թվականի մարտի 29-ին հասցեագրված դիմումը՝ «ԱՐԱՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն կատարելու վերաբերյալ՝ մատնանշելով այն հանգամանքը, որ դիմումի հետ միաժամանակ (նշված է կից փաստաթղթերի ցանկում) ներկայացվել է նաև ընկերության բաժնեմասը 2017 թվականի հոկտեմբերի 19-ին հավատարմագրային կառավարման հանձնելու մասին պայմանագիրը:

***2. Որոշումն ընդունելու իրավական և փաստական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը.***

Ռաֆիկ Խանդանյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

Օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ ***արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը՝ նշելով արժեթղթի***



251

***տեսակը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը*** կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն:

Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ **«Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում»** բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը, տոկոսը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ «Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որում հայտարարատու պաշտոնատար անձի ունեցած բաժնեմասը հանձնված է հավատարմագրային կառավարման, կամ հավատարմագրային կառավարչի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, պայմանագրի գործողության ժամկետը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր



252

հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, *այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:*

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե ***կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ***:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի ***282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է գործի վարույթը կարճելու մասին որոշում (----) բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:***

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, N ՎԻՎ/20/22 վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթում *հաստատված է համարում, որ անզգուշությամբ կատարվել է խախտում, այն է՝* ՀՀ վարչական դատարանի դատավոր Ռաֆիկ Գագիկի Խանդանյանի կողմից Հայտարարագրում՝ «Առկա են արժեթղթեր և այլ ներդր

ումներ» բաժնում, հայտարարագրել է «ԱՐԱՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 100% բաժնեմաս: Ռաֆիկ Խանդանյանի կինը՝ Նատելլա Բեգլարյանը 2020 թվականի տարեկան հայտարարագրում՝ «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում, հայտարարագրել է «ԳՐԱՆԴ ՀԱՈՒԶ» ՍՊԸ-ի 100% բաժնեմաս: Մինչդեռ, Ռաֆիկ Գագիկի Խանդանյանը Հայտարարագրում՝ «Տվյալ տարվա ընթացքում եղել է մասնակցություն առևտրային կազմակերպություններում» և «Տվյալ տարվա ընթացքում



253

եղել է հավատարմագրային կառավարման հանձնված բաժնեմաս» բաժիններում չի ներկայացրել իր և իր կնոջ՝ Նատելլա Բեգլարյանի մասնակցությունը առևտրային կազմակերպության կապիտալում և/կամ Ռաֆիկ Խանդանյանին պատկանող բաժնեմասերը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տեղեկություններ, որով խախտել է Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները, որոնց համաձայն՝ հայտարարագիրը ներառում է մասնակցությունը առևտրային կազմակերպություններում, ինչպես նաև պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ հայտարարագրման ենթակա տվյալներ: Նշված արարքը հանդիսանում է վարչական զանցանք՝ հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը)

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը լուծելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169. 28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել



254

պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը: Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներն ընդգրկում են Հայտարարագրի՝ **«Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում»** ***բաժնում*** ներառվող այնպիսի տվյալներ, որոնք ***բովանդակային առումով ներառվում են*** նաև Օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հայտարարագրման ենթակա, այն է՝ ***արժեթղթի տեսակի, ձեռք բերելու օրվա, ամսվա, տարվա, եղանակի, արժեքի (գնի, արժույթի, գործարքի մյուս կողմի անվանման, հասցեի*** վերաբերյալ տվյալներում: Այս առումով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ Հայտարարագրի «*Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացվող տվյալները հանդիսանում են այն անհրաժեշտ և համակարգային առումով փոխկապակցված տվյալները, որոնք բավարար են պաշտոնատար անձի հայտարարագրերի պատշաճ վերլուծությունն իրականացնելու համար: Նշվածից բացի, վերոնշյալ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվում է նաև պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվում նաև հանրային հաշվետվողականությունը*:

Ինչ վերաբերում է Օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվող Հայտարարագրի՝ «Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում հայտարարատու պաշտոնատար անձի բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տվյալները Հայտարարագրում ներկայացված



255

չլինելուն, Հանձնաժողովը գտնում է, որ գործում առկա բավարար փաստական տվյալներով հավաստվում է այն, որ «ԱՐԱՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը հաշվետու ժամանակահատվածում հանձնված է եղել հավատարմագրային կառավարման, որպիսի պարագայում Հայտարարագրում այն չներկայացնելը չի հանգեցնում նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը:

Տվյալ պարագայում Հանձնաժողովն ընդգծում է նաև, որ սույն գործում առկա փաստական տվյալներով արդեն իսկ ապահովվում է պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտման իրավական հնարավորությունը:

Այս առումով Հանձանաժողովն արձանագրում է, որ խախտման որակական կողմը գնահատման է պետք ենթարկվել օրենքի ձևական և բովանադկային տեսանկյունից, որպեսզի պահպանվի կիրառվող օրենքի և դրանով հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ հարաբերակցությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովը հաստատել է, որ Ռաֆիկ Խանդանյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է ներկայացնել գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ:

Սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ Դատավորը պարտավոր է պահպանել սույն օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները: **Վարքագծի**



256

**կանոնները չպահպանելը սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության**:

Սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ վարույթ հարուցած մարմինը կարճում է կարգապահական վարույթը, եթե՝ ***առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.***

Սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արարքը չի համարվում կարգապահական խախտում, ***եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով*** կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված՝ դատավորների կողմից ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականության ապահովման և պատասխանատվության համաչափության վերաբերյալ դրույթներին: Այսպես, 2005 թվականին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9(17), որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 7-ին:

Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՝ հաշվի առնելով դատական իշխանության անկախությունը և կոռուպցիայի դեմ պայքարում նրա որոշիչ դերը՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան և առանց դատական մարմինների անկախությանը վնասելու, պետք է միջոցներ ձեռնարկի դատական մարմինների աշխատակիցների ազնվության մեծացման ուղղությամբ և նրանց շրջանում կոռուպցիայի հնարավորությունները բացառելու համար: Այդպիսի միջոցները կարող են ներառել դատական մարմինների աշխատակիցների գործողություններին վերաբերող կանոնները:



257

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի ուղեցույցի համաձայն՝ դատավորների կողմից ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականությունը զարգացող միտում է և նպատակ ունի հասցեագրել շահերի բախման, յուրացման կամ ապօրինի հարստացման խնդիրները (տե՛ս ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի «Հոդված 11-ի կիրառական ուղեցույց և գնահատման շրջանակ», կետ 44[1]):

Գույքային դրության վերաբերյալ ամբողջական տվյալների ներկայացումը Վենետիկի հանձնաժողովի կողմից կոռուպցիայի կանխարգելման գործում դիտարկվել է որպես արժեքավոր զենք (տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) CDL-AD(2014)008, 24 մարտի, 2014 կարծիք No. 712 / 2013): Կարևորելով ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականությունը՝ Վենետիկյան հանձնաժողովն անդրադարձել է նաև ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի հայտարարագրման պարտավորության չկատարման դեպքում ***պատասխանատվությանը և դրա համաչափությանը:*** Ըստ Վենետիկյան հանձնաժողովի՝ ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի հայտարարագրման պարտավորության չկատարումը պետք է առաջացնի այնպիսի պատասխանատվություն, որը կարող է ծառայել կոռուպցիան զսպելու նպատակին: Բացառություն կարող է կիրառվել *հայտարարագրում մանր և ոչ դիտավորյալ բացթողումներ ունենալու համար*, սակայն հայտարարագիր չներկայացնելը բավարար լուրջ խախտում է, և կարող է հանգեցնել պաշտոնից ազատման (Վենետիկյան հանձնաժողով CDL-AD(2015)042, 21 դեկտեմբերի, 2015 կարծիք No. 825/2015):

Նշվածից հետևում է, որ դատավորների կողմից ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ ***հայտարարագրման պարտավորությունը ծառայում է կոռուպցիան զսպելու նպատակին***՝ բացառելու համար շահերի բախման, յուրացման կամ ապօրինի հարստացման խնդիրները, իսկ բոլոր այն դեպքերում, երբ առկա է հայտարարագրում մանր և ոչ դիտավորյալ բացթողումներ, որոնցով չի խաթարվում

[1]https://www.unodc.org/res/ji/import/programmes_projects_initiatives/the_united_nations_convention_against_corruption_implementation_guide/the_united_nations_convention_against_corruption_implementation_guide.pdf



258

հայտարարագրման պարտավորության բուն նպատակը, պատասխանատվությունը բացառվում է:

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորումների բովանդակությունը և հիմք ընդունելով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթում հաստատված հանգամանքները՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ռաֆիկ Խանդանյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր չներկայացնելու արարքը հանրային վտանգավորության տեսակետից նվազ նշանակություն ունենալու պարագայում, 2022 թվականի մայիսի 19-ի հարուցված թիվ N ԿՎ/08/2022 կարգապահական վարույթում առկա չէ վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 6.1-րդ մասով՝ Հանձնաժողովը.

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. ՀՀ վարչական դատարանի դատավոր Ռաֆիկ Գագիկի Խանդանյանի նկատմամբ 2022 թվականի մայիսի 19-ի հարուցված թիվ N ԿՎ/08/2022 կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի բացակայությամբ:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Ռաֆիկ Գագիկի Խանդանյանին, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին և ՀՀ արդարադատության նախարարին:

**ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝** **ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**



259